

4.2 Ջրոսաշրջություն

4.2.1. Միջազգային զրոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների¹, 2007թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 510287 զրոսաշրջիկներ, 2006թ. նույն ժամանակաշրջանի 382240 զրոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 133.5% : Նույն ժամանակաշրջանում զրոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 467574 մարդ կամ 2006թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճի տեմպը կազմել է 138.7%:

¹ Ներգնա և արտագնա զրոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք են հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ 77 ժամանողների և 77-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված 77 տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունից, ինչպես նաև 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոսը 77 ԱՎԾ, Ջրոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ՋՋԳ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄԳՀ) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները: Ստացված արդյունքների հիման վրա վերանայվել են նաև 2006թ. ներգնա և արտագնա զրոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի ցուցանիշները: